Արձանագրություն N 7
«181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Ա.Բաբաջանյան 4 **«30» «11» 2017թ**
ժ.12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Դ.Մակիչյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է.Մովսեսյանը,Ա.Եփրեմյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Ղազարյանը

1. Գնանշման հարցման ընթացակարգի_առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Դ.Մակիչյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին 21.11.2017թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում իրենց կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը ներկայացնելու մասին, որի կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում:

- 21.11.2017թ. Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը ներկայացվել է սահմանված ժամկետներում:
- Հանձնաժողովի քարտուղարի կոմից 24.11.2017թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ տրամադրվել է հանձնաժողովի անդամներին,արդյունքում ապրանքների տեխնիկական բնութագրերում արձանագրվել են որոշակի անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ,մասնավորապես ներկայացված Պրոյեկտորի էկրանի չափերը՝ (400x 250սմ) ,չեն համապատասխանում հրավերով սահմանված չափերին՝ (400x 300 սմ:

2. Արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու մասին

(Դ.Մակիչյան)

Հանձնաժողովը որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1

- Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին, էլեկտրոնային եղանակով ծանուցել հրավերի պահանջների նկատմամբ ներկայացված տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության վերաբերյալ՝ նրան առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներքոնշյալ անհամապատասխանությունները, որի կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետնում:

Գնահատման արդյունքները բերված են ստորև.

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները գնահատականը			Մասնակցի հայտի գնահատման արդյունքները Մասնակցի անվանումը «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
1	«Մասնակցության իրավունքը»չափանիշը	Բավարար Անբավարար	Բավարար
2	Ապրանքների ամբողջական նկարագիրը	Բավարար Անբավարար	Բավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		Բավարար Անբավարար	Բավարար

2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Դ.Մակիչյան)

Հանձնաժողովը որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին:

-Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Դ.Մակիչյան
Անդամներ՝		Է.Մովսեսյան
		Ա.Եփրեմյան
Քարտուղար՝		Հ.Ղազարյան